ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ԵՎ «ՀՈԳԻՆ Է ԿԵՆԴԱՆԱՐԱՐ...»»

«Զի հաւատաք ձեր պատմեալ
են ընդ ամենայն աշխարհ»:
(ՀՌՈՄ. Ա. 9)

Տասը տարի առաջ էր, երբ վերստին ալիքվեց Հայոց աշխարհը: Բազում տեղատվություններ և մակընթացություններ ապրած մեր աշխարհում այս մեկն իր ծնունդով և հզորությամբ կարծես կանխանշում էր իր հաղթանակի մասին: Հայկյան հորդահոս դեսը իր պարզկա երեսով ու բոլոր տիզմ ու ցեխով եկել-կանգ էր առել այս հանգրվանում՝ անընդհատ իր մեջքն ուռեցնելով պատրաստ պայթելու և հորդելու՝ հոսելով մաքրվելու: Ծնունդը չուշացավ:

Արցախյան լեռնաշղթայից պարզված արևածագին արթնացել էր քաղաքամայր Երևանը: Եվ Արևի ջերմությունից ինչպես վերանում է ամեն մանրէ և գաղջ գոլորշի, այնպես էլ կարծես «ի սահմանաց մերոց եւ ի բնակութենէս մերմէ» հեռու էր վանվել չարն ու մութը, և պարզվել էին Հայության թաքնված ու անթեղված ամենարարձրագույն զգացումները՝ ազատության աստվածատուր տենչը, անպարփակ սերը և աննահանջ կամքը: Ձեռքով շոշափելի, աչքով տեսանելի և ականջով լսելի իրականություն էր աստվածային Պողոսի խոսքը. «Եղբայրնե՛ր, միմյանց բեռը վերցրեք և այդպես կատարեցեք Քրիստոսի օրենքը» (ԳԱՂ. Զ 2):

Անցան ծննդյան պարգևած բերկրանքի օրերը: Այժմ հասել է այդ հրաշամանուկին մեծացնելու, խնամելու և պահելու ժամանակը: Սակայն մենք՝ ականատես ապրողներս, ազատության ու հաղթանակի բերած և՛ բերկրանքը, և՛ դժվարությունները վաստակած, երբեմն կարևորը անկարևորից զանազանելու մեջ թերանում և ընկրկում ենք: Ընթերցում ենք պատմությունը, վերլուծում այն, հանգում տարաբնույթ եզրակացությունների՝ դատելով հեռավորության լույսի ներքո, բայց շատ հաճախ էլ կա՛մ մեր ցանկությամբ, կա՛մ իրապես մոռանում ենք այդ պատմության բացված էջերի մասին: Չենք կարողանում սերտել, որովհետև պատմության մասին խոսելը անչափ դյուրին է, իսկ անմիջականորեն կրելը՝ չափազանց դժվար: Մենք կրողներն ու պատասխանատուներն ենք ոչ միայն այսօրվա, այլև վաղվա: Այդ բեռն այսօր մե՛րն է:

Այս տարի զարմանալի զուգադիպությամբ Արցախյան ազատամարտի տասնամյակի տոնախմբությունը համընկավ Վարդանանց հերոսամարտի ոգեկոչման տոնի հետ: Այո՛, մի նոր Ավարայր է Արցախյան գոտեմարտը, որն ամեն օր սպասում է իր նորօրյա Նվարսակին:.Ավարայրը շարունակվում է: Սակայն, փառք Աստուծո, այսօր ոչ թե մարզպանական Հայաստանն է պայքարում իր գոյության համար, այլ Հայոց պատմության եզակի իրավիճակում գտնվող անկախ պետականություն ունեցող Հայաստանի և Արցախի բանակներն ու դիվանագետներն են լարում իրենց ճիգերը՝ Հայության պատվի, ազատության ու արդարության Աստվածապարգև իրավունքների հաստատման համար: Եվ այս բոլորից ոչ միայն անմասն չէր, այլ նաև ջատագովն ու պաշտպանն էր Հայոց իրական պետականության ռահվիրա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Տասնամյա պայքարի ամբողջական շրջանը մեր աչքի առջև ունենալով և այսօր իսկ գտնվելով շարունակվող ընթացքի մեջ, ցանկանում ենք խորհրդածել մի քանի կետերի շուրջ.

Ա. Հայ Եկեղեցին Արցախյան պայքարի հանդեպ.

Ավելորդ անգամ կրկնած չենք լինի այն միտքը, որ դժբախտաբար Հայոց պետականության անկումից հետո բարոյապես և ինչու չէ՝ նաև վարչականորեն, իր հոգևոր, փրկչական առաքելությանը զուգահեռ Հայ Եկեղեցին ստիպված եղավ իրականացնել մի նոր առաքելություն՝ հայրենի պետության վերականգնումը: Հայ Եկեղեցու Հայրապետներն ու պարզ հոգևորականները դարձան նաև քաղաքական գործիչներ, երևույթ, որը նույնիսկ երբեմն-երբեմն ավելի մեծ տեղ գրավեց եկեղեցական կյանքում: Պարտ է շեշտել, որ և՛ անցյալում, և՛ այսօր Եկեղեցին ընկալվել է որպես սոսկ ազգապահպանության մի օջախ՝ դասվելով ի շարս ազգային մյուս հաստատությունների, «եւ այնքան թեթեւ դատողութեամբ պաշտպանւում է այս տեսակետը, որ Եկեղեցին պարզապէս օգտագործում է որպէս առիթ եւ միջոց ազգային նպատակների համար... մի հաստատութիւն, որ կը կորցնի իր իւրահատուկ նկարագիրը, չի կարող արդիւնաւորապէս ծառայել ուրիշ նպատակների... Եկեղեցին ինք որպէս Եկեղեցի, կենսունակ եւ ուժեղ պէտք է լինի, որպէսզի կարողանայ ազգին ծառայել դրական արդիւնաւորութեամբ, չօշափելի գծերով»: Այսուհանդերձ Հայ Եկեղեցին կանգնել է ազգային և պետական շահերը պաշտպանողի դիրքերում այն համոզմամբ, որ այն պաշտպանությունն է իր ավազանում մկրտված զավակների և ընդհանրապես քրիստոնեության:

Եթե ուսումնասիրելու լինենք վերջին շրջանի պատմությունը, կտեսնենք, որ Արցախյան շարժումը դեռևս ակունքներում՝ 60-ական թվականներին և ավելի առաջ, վայելել է Հայ Եկեղեցու անաղմուկ կամ բացահայտ հովանավորությունը: Իսկ վերջին տասնամյա դոյամարտում Հայ Եկեղեցու գործունեությունը, կարելի է ասել, բաժանվեց երեք որոշակի ուղղություններ. հոգևոր կյանքի վերարթնացում, որի արդյունքում բացվեցին երբեմնի Աղվանից աշխարհի հոգևոր կենտրոն Գանձասարի վանքը, դպրության կենտրոն Ամարասի վանքը, Ինածախի և Հոռոմթաղի եկեղեցիները, Շուշիի նշանավոր Կանաչ ժամը, Ստեփանակերտի թատրոնի շենքում, որը նախկին եկեղեցու տեղում է կառուցված, մատուցվեցին պատարագներ, և այն ևս դարձավ յուրահատուկ հոգևոր կենտրոն: Վերանորոգության ընթացքի մեջ մտավ Շուշիի Թագուհին՝ Ղազանչեցոց կամ Ամենափրկիչ եկեղեցին, իսկ Ստեփանակերտում վեր պիտի բարձրանա նոր կաթողիկեն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի անունով, որն էլ պիտի դառնա նոր և հաղթական կյանքի հայության վավերագիրը: Բարոյական և նյութական օժանդակությունը անմիջականորեն ռազմի դաշտում ամեն վայրկյան զգալի և տեսանելի էր այնտեղ իսկ ապրող և գործող ժողովրդին: Բավական է նշել, որ ընթացող ռազմական գործողություններն իսկ արգելք չհանդիսացան վերաշինական աշխատանքներին, որոնք համատեղվում էին պատերազմին: Իսկ հայ հոգևորականները հարկադրված եղան խաչի հետ միաժամանակ նաև զենք կրել և վերահաստատել, թե «այս հավատքից մեզ ոչ ոք չի կարող խախտել»:

Միջազգային ատյաններում, զանազան եկեղեցիների պետերի և բազմաթիվ

Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Հայց. եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ», Ա. Էջմիածին, 1996, էջ 95-977:

երկրների ղեկավարների ու պատասխանատու անձանց հետ հանդիպումներին, Արցախի հարցի արդարորեն լուծումը մնաց և մնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսության թե՛ երջանկահիշատակ Վազգեն Ա և թե՛ Գարեգին Ա Վեհափառների մտահոգությունների և երկխոսությունների կարևորագույն կետերից մեկը: Չի եղել որևէ փաստաթուղթ կամ համատեղ հայտարարություն, երկխոսություն կամ պարզ զրույց, որտեղ անպայմանորեն արծարծված չլինի Արցախի հարցի նպաստավոր հանգուցալուծումը:

Իսկ այս վերջին տարիների համեմատական խաղաղության պայմաններում հոգևոր-բարոյական և նյութական օժանդակություններով Հայ Եկեղեցին մեծապես մասնակցում է Արցախի Հանրապետության ամրացմանն ու զորացմանը: Եվ իրավացի է Գարեգին Վեհափառը, որ «եթե այսօր մեր գոյամարտը, անկախ մեր ցանկությունից, որքան էլ երկար տևի, ոչ մի ատեն ընկրկում, նահանջ, թուլացում մենք մեզ չենք կարող թույլատրել: Դա դավաճանություն է Աստծուն, դավաճանություն է Հայրենիքին... Վերջապե՛ս այսօր թե՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, թե՛ Հայաստանի Հանրապետությունը և թե՛ մեր Եկեղեցին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ձեռք-ձեռքի տված պիտի լծվենք շինարարական աշխատանքի, որպեսզի երբ մարդիկ այս հողը տեսնեն, ասեն, հայեր են անցել այս հողից, հայեր են ապրում այս հողում»:

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.

Միանշանակ է, որ Արցախյան գոյամարտի արդյունքը եղավ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության ծնունդը: Դա ոչ միայն ֆիզիկական ազատություն և անկախություն էր՝ իրավաբանորեն ձևակերպված, այլ նոր մտածողության՝ ազատ լինելության իդեալի հաստատումը: Խորհրդային տարիներին բազմաթիվ հայ երիտասարդների բանտերի ու աքսորների գնով ծավալած պայքարը սակավ առ սակավ ձևավորեց այն միտքը, որ ազատ ու անկախ ապրելը բնական գոյավիճակ է՝ Աստուծո կողմից սահմանված Ստեղծագործության առաջին իսկ պահին: Եվ Արցախյան մարտը ամբողջացնողն ու սլաքը՝ հավաքական դրսևորումը դարձավ այդ գոյակռվի:

1991 թվականին սկզբնավորված Հայաստանի նոր Հանրապետությունը, իր ամբողջ ներուժն օգտագործեց ի պաշպանություն Արցախի: Առանց Հայաստանի Հանրապետության եռանդուն մասնակցության, թե՛ ռազմական և թե՛ դիվանագիտական դաշտերում, գոյություն չէին կարող ունենալ ո՛չ Արցախի Հանրապետությունը և ո՛չ էլ այսօրվա ազատագրված տարածքները: Իսկ բազմաթիվ զինվորների հերոսությունն ու հեղված արյունը մեր պատմության մեջ կմնար հերթական բարոյական հաղթանակի արձանագրում կամ առանձին-առանձին՝ անմահության պսակ ժառանգած ֆիդայական անխոնջ պայքարի դառն հիշատակություն և հպարտանալու կեղծ ինքնարտահայտություն: Անժխտելի է Հայոց Պետության դերը տասնամյա պայքարի հաղթանակի առումով:

Սակայն, վերլուծելով անցած տարիները, հարկ է արձանագրել, որ դրանք դյուրին և սահուն չեղան: Պատերազմը, ֆիզիկական և նյութական ավերի հետ միասին, փլատակների վերածեց մեր ամբողջ ներքին աշխարհը: Ոչ միայն տնտեսական և սոցիալական դժվարություններից իրավացիորեն առաջացած դժգոհությունները, այլև զանազան մակարդակներում տեղ գտած ոչ բարոյական մթնոլորտը ստիպեց ավելի կծկվելու և կորանալու: Պատերազմն իր ողջ ներքին և արտաքին ծալքերով ներկա եղավ մեր կյանքում: Ճշմարիտ է ասված,

որ երկրի զարդն ու ապահովությունը ոչ թե նրա մեծությունն ու հարստությունն է, այլ նրա քաղաքացիների հոգեկան արժանավորությունը: Այն երկիրը, որից բացակա են աստվածասեր բնակիչները, ամենավերջին գյուղից էլ վատն է. դատարկ այրերից անփառունակ, թեկուզև այլ երկրներից ու պետություններից հաղարավոր պատիվներ ստանա:

Արցախյան ճակատամարտը չի սահմանափակվում միայն ռազմի դաշտով: Այն նախ և առաջ մե՛ր մեջ է: Ազատության արժանիության իրական և ամենաուժեղ դասը դարձյալ Սուրբ Գիրքն է մեզ ավանդում: Եգիպտական գերությունը տեսած և այդ գերությունից դուրս եկած հրեա ժողովուրդը, 40 տարիներ անապատում դեգերելով հանդերձ, Ավետյաց Երկիր մտնելու բերկրանքը չունեցավ, այլ այն ժառանգեց անապատում ծնված սերունդը, որն իր վրա չէր կրել գերության դրոշմը: Այսինքն՝ ազատությունը ազատագրվածին է վայել:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը, խոսելով փառավոր անցյալ ունեցող Հունաստանի կործանման պատճառների մասին, հետևյալ եզրահանգումն է անում. «Զնայելով Հռովմայեցիների դեպի յոյները ցոյց տուած զիջողութեան ու մեղմութեան, չկարողացան նոքա պահել իրենց ազատութեան վերջին մնացորդները, որովհետեւ անբարոյական, կուսակցութեան եւ կրքի զգացմունքներով կուրացած ազգն այլ եւս անկարող էր վայելել այն: Մատնութիւնը, նենգութիւնն ու երկպառակութիւնը վերջ տուին նրանց անկախութեան վերջին մնացորդներին, եւ այնուհետեւ անվեհեր քաջութեան հայրենիք Սպարտայի որդիքը վարձկան զինուորներ դարձան, իսկ աթենացիք՝ որպէս արուեստագէտներ, ուսուցիչներ, դերասաններ կամ պարողներ, զբաղեցնում էին Հռովմայեցիներին՝ ենթարկուած նրանց արհամարհանքին:

Այսպէս է պատմութեան անողոք դատաստանը բարոյական օրէնքների հակառակ ընթացող ազգերի համար եւ վա՜յ այն ժողովրդին, որ չի կամենում տեսնել եւ ճանաչել այն» :

Գ. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի անկախ Հանրապետությունն իր տեսակով և բովանդակությամբ եզակի և նոր երևույթ է մեր ողջ պատմության մեջ: Ժամանակ առ ժամանակ հայոց կենտրոնական պետությանը կամ իշխանությանը զուգահեռ գրեթե միշտ եղել են հայոց այլևայլ թագավորություններ և իշխանություններ, որոնք իրենց կենտրոնախույս ձգտումներով, կարելի է ասել, եթե չեն կործանել, ապա անպայմանորեն հող են նախապատրաստել կենտրոնական պետության անկման համար: Սակայն մերօրյա Արցախի Հանրապետությունն ինքնին մի մեծ ուժ և պատվար է Հայաստանի Հանրապետության թիկունքին: Անհերքելի է, որ երկու Հանրապետություններն էլ ծնվել և գործում են Հայության միասնականության, ամուր և հզոր մեկ Հայրենիք ունենալու հեռանպատակով: Սա պետք է լինի վերջնական երազանքը կամ վերջնական երազանքների սկզբնակետ-մեկնակետը:

Արցախն իր մաքառումների գնով փաստեց այս արևի տակ մեր գոյության իրավունքը: Այն ընդեց գարասկզբին կրած ամոթն ու անպատվությունը:

Եվ, վերջապես, ամեն մտքից ու պատկերացումից վեր էր, երբ Հայոց զենքի,

---

«Տուք զկայսերն՝ կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998 թ., էջ 49-50:

Ազատարար Զինվորի ոտքերի առջև խոնարհվեց անառիկ հռչակված Շուշին: Դեռևս Խամսայի մելիքությունների օրերից ոտարի շնչառությամբ ապրող Արցախի դշխոն սկսեց տրոփել հայերին, խոսել հայերեն, մտածել հայերեն և աղոթել հայերեն: Շուշվա առումը մեր պատմության գագաթնակետն է: Երբևէ չենք կարող հիշել այքան փառավոր և հիմնավոր մի հաղթանակ, որով ասում ենք աշխարհին. «Եթե Աստուած մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (ՀՌՈՄ. Ը 31):

Արցախյան պայքարը չէր կարող, սակայն, միայն հողի կոիվ լինել: Հողը պարզապես միջոցն էր հոգեկան արժանավորության սահմանները գնահատելու համար: Այն հոգեմարտ է, Աստուծո և բարիի վկայության պատերազմ: Եթե մեկ վայրկյան անգամ փորձենք հեռացնել մեզանից այս ճշմարտությունը, հաղորդ պահը ճակատագրական կարող է լինել: Մենք իրավունք չունենք ամբարտավանանալու, իրավունք չունենք ինքնահմայվելու, որի պատճառով կորցրեցինք Շահումյանը և Մարտակերտի շրջանի մի հատվածը: Սակայն, փառք Աստուծո, որ Նա մեզ միայնակ չթողեց, չթողեց ընկրկելու, չթողեց նահանջելու և հուսահատվելու: Այս ուղղամիտ հորդորն է հղում աստվածային Գողոսը՝ ճիշտ կարծես մեր օրերի և մեզ համար ասված, թե «Եղբայրնե՛ր, դուք կոչուած էք ազատութեան. միայն թէ ձեր ազատութիւնը սոսկ մարմնի օգտի համար չլինի, այլ սիրո՛վ ծառայեցէք միմեանց» (ԳԱՂ. Ե 13):

Ազատությունը, գերագույնը լինելով հանդերձ, պարզորոշ ի ցույց է հանում կյանքի բոլոր երեսները: Միայն այսպիսի պայմաններում է հայտնաբերվում, թե ինչի է ընդունակ մարդը, քանի որ ազատ է իր մտածումների և գործելու մեջ և հանդես է գալիս այնպես, ինչպես որ կա: Ազատության, այսպես կոչված, «անցումային» շրջանում գտնվող մեր պետությունն ու ժողովուրդն էլ զերծ չմնացին փորձություններից ու գայթակղություններից: Շատ հաճախ գութկությունն ու անպատշաճությունը, որպես ենթադրված ազատություն, փոխարինեցին իրական արժեքին և հասկացությանը: Արևմտյան կեղծ համակարգերն ու արժեքները սինթեզվեցին մեր կյանքին՝ առանց որևէ առնչություն ունենալու մեր նկարագրի ու էության հետ: Երիցս ճշմարիտ է լուսահոգի Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսը՝ շեշտելով, որ «մինչև չսովորենք ապրել մեր Հայրերի լաւագոյն զգացումներով, չաքանչանանք մեր նախնեաց ազնիւ ստեղծագործութիւններով, չհասկանանք կանգուն եւ աւերակ յիշատակարանների անմոռանչ, բայց կենդանի լեզուն, բարոյապէս քաղաքակիրթ մի նոր ազգ դառնալ անկարող ենք» *:

Արցախյան տասնամյա պայքարը, անկախ ամեն ինչից, մեզ դնում է մի մտածումի առջև, որ մենք պատմություն ենք կերտում ապագայի համար: Սերունդները լոկ գրքերից կամ ապրողների հիշողություններից են իմանալու այսօրվա դժվարությունների մասին՝ առավելն հիանալով մերօրյա ծանր օրերին դիմագրավելու տոկունության, կամքի դրսևորման համար: Սակայն իրականն այն է լինելու, որ նրանք ապրելու են ազատ ու անկախ Մայր Հայրենիքում՝ իր ազատագրված Արցախ աշխարհով, որքան էլ որ լինեն նրա սահմանները և այդ ժամանակ է, որ «հաւատք մեր պատմեալ իցեն ընդ ամենայն աշխարհ»:

*** Նույնը, էջ 29: